

## Խառը թվերի հանումը/ մաս 3

2 խառը թվերի տարբերությունը գտնելու համար

- պետք է համեմատել նվազելիի և հանելիի կոտորակային մասերը
- եթե նվազելիի կոտորակային մասը մեծ է հանելիի կոտորակային մասից, ապա պետք է առանձին-առանձին կատարել ամբողջ մասերի և կոտորակային մասերի հանում և իրար գումարել ստացված արդյունքները:

Օրինակ՝

$$2\frac{3}{6} - 1\frac{2}{6}$$

$$\text{Համեմատենք } \frac{3}{6} > \frac{2}{6}$$

Ուրեմն՝

$$2\frac{3}{6} - 1\frac{2}{6} = (2 - 1) + \left(\frac{3}{6} - \frac{2}{6}\right) = 1 + \frac{1}{6} = 1\frac{1}{6}$$

- եթե նվազելիի կոտորակային մասը փոքր է հանելիի կոտորակային մասից, ապա նվազելիի կոտորակային մասին պետք է ավելացնել 1՝ այն հանելով նրա ամբողջ մասից ու կիրառել նախորդ կանոնը:

## Օրինակ`

$$3\frac{1}{6} - 1\frac{5}{6}$$

Համեմատենք  $\frac{1}{6} < \frac{5}{6}$

$$\begin{aligned}\text{Ուրեմն } 3\frac{1}{6} - 1\frac{5}{6} &= 2 + 1\frac{1}{6} - 1\frac{5}{6} = 2 + \frac{7}{6} - 1\frac{5}{6} = \\ &= (2-1) + (\frac{7}{6} - \frac{5}{6}) = 1 + \frac{2}{6} = 1 + \frac{1}{3} = 1\frac{1}{3}\end{aligned}$$

## Առաջադրանքներ

- Կատարեք խառը թվերի հանում:

$$18\frac{13}{16} - 11\frac{11}{16} =$$

$$12\frac{4}{25} - 1\frac{3}{50} =$$

$$30\frac{3}{4} - 11\frac{5}{28} =$$

$$24\frac{3}{5} - 21\frac{2}{9} =$$

$$8\frac{3}{6} - 6\frac{2}{8} =$$

$$15\frac{1}{33} - 5\frac{2}{3} =$$

$$10\frac{2}{3} - 3\frac{3}{20} =$$

$$25\frac{3}{7} - 12\frac{5}{14} =$$

$$50\frac{3}{15} - 18\frac{7}{10} =$$

- Աստղանիշի փոխարեն ի՞նչ թիվ գրելու դեպքում կստացվի հավասարություն:

$$* + 11\frac{1}{5} = 44\frac{2}{3}$$

$$* + 15\frac{2}{5} = 90\frac{4}{5}$$

$$* + 18\frac{2}{11} = 19\frac{4}{7}$$

- Ուղղանկյան լայնությունը փոքր է նրա երկարությունից  $1\frac{1}{8}$  մ-ով, հաշվեք ուղղանկյան պարագիծը, եթե նրա երկարությունը 4 մ է: